ԱՐԵՆԻԻ ՀՈՒՆԱՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(Հայաստանի մ. թ. II դարի քաղաքական իրադարձությունների շուրջը)

Ն. Ի. ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՈՎ

Պատմական Սյունիքի Վայոց ձոր գավառում (Հայկական ԽՍՀ Եղեգնաձորի շրջան), Արենի գյուղի մոտ ճանապարհաշինական աշխատանքների ժամանակ 1978 թ. հայտնաբերվեց արձանագիր ոչ մեծ մի վեմ։ Սկզբնապես այն համարվեց սահմանաքար։ Պահվում է Եղեգնաձորի գավառագիտական թանգարանում։ Թանգարանի նյութերին ծանոթանալուց և հայտնաբերված վայրում լինելուց հետո (1981 թ.) պարզեցինք, որ արձանագրությունը գրված է հին հունարեն, քարե ոչ մեծ զոհասեղանի վրա, որը պատրաստված է միակտուր կրաքարից և ունի քարի այդ տեսակին բնորոշ մակերես։ Զոհասեղանն ունի ուղղանկյան տեսք, որի վերին և ներքին մասերը ավելի լայն են (նկար 1). դա բնորոշ է անտիկ դարաշրջանի զոհասեղաններին։ Ընդհանուր բարձրությունը 43 սմ է, կենտրոնական նեղ մասի բարձրությունը՝ 22 սմ, լայնությունը՝ 16 սմ։ Թեթևակի թեքված, 2 սմ բարձրություն ունեցող անցումներով այն միանում է զոհասեղանի ներքին և վերին ավելի լայն մասերին, որոնք ունեն 8-ական սմ բարձրություն և 20-ական սմ լայնություն։ Զոհասեղանի վերին լայն մասի կենտրոնը ակոսում է մի գոտի։

Նկ. 1

Զոհասեղանի վերին հորիզոնական հարթության վրա կա 3 սմ-ի չափով գավաթաձև մի փոսիկ, որ հատուկ է անտիկ զոհասեղաններին։ Վեց տողից բաղկացած արձանագրությունը արված է անհավասարաչափ, զոհասեղանի միջին մասի մի կողմի վրա։ Առաջին չորս տողերը փորագրված են ըստ նախապես նշված չափերի, համեմատաբար խորն են, ունեն 3 սմ բարձրությամբ և 2 սմ խորությամբ տառերի պարզ ուրվագիծ։ Հեռավորությունը տառերի միջև 0,5 սմ է, տողերի շարքերի միջև՝ 1 սմ։ Հինգերորդ տողի առաջին տառը դծագրված է նույնքան պարզորոշ ու խոշոր, որքան առաջին չորս տողերի տառերը։ Հինգերորդի մնացած տառերը և ամբողջ վեցերորդ տողը գրված են ավելի մանր, մակերեսային, առանց չափերը նախապես նշելու, չունեն պարզ ուրվագիծ։ Ըստ երևույթին փորագրողը միայն հինգերորդ տողում է զգացել, որ նախապես չափերը սխալ է նշել և, փորձելով տեղավորել արձանագրության մնացած մասը, փոքրացրել է տառերի չափերը։ Առաջին

---

* Օգտվելով առիթից, մեր երախտագիտությունն ենք հայտնում Եղեգնաձորի գավառագիտական թանգարանի դիրեկտոր Գ. Ա. Ամիրյանին և գլխավոր ֆոնդապահ Ղ. Մ. Օղայանի՝ մեզ ցույց տված օժանդակության համար։

չորս տողերի տառերի գծագրությունը գրեթե միանման է, տարբերվում է միայն առաջին և երրորդ տողերի M-ի գծագրությունը։ Չորրորդ տողում անորոշ է չորրորդ տառի ուրվագիծը, որ ունի B-ի ձև։ Սակայն լայնակի միջին գծի բացակայությունը ներքևի աջ և ձախ կողմերում, տառի փորագրման խորության և հստակության տարբերությունը թույլ են տալիս ենթադրել, որ նախօրոք այստեղ գծագրված է եղել Π և վնասվելու պատճառով ձեռք է բերել B-ի ձև։ Մաշվածությունը և կոտրվածքները (հատկապես եզրերին) փոքր-ինչ դժվարացնում են ընթերցումը, սակայն բնագիրը, այնուամենայնիվ, վերծանվում է։

'Εμίλιοσ /Οvάλης/Γῆ Μετρὶ /Ολύπρι/Θεᾶ δεσπ[ο] ίνα

ԷՄԻԼԻՈՍ ՎԱԼԵՍ (ՎԱԼԵՆՏ) ՄԱՅՐ ԵՐԿՐԻՆ (ԴԵՄԵՏՐԻՆ)
ՕԼՅՈՒՊՐԻ ԱՍՏՎԱԾՈՒՀԻ ՏԻՐՈՒՀՈՒՆ

Արձանագրությունը ընթեռնելուն մեզ սիրահոժար օգնեց բանասեր Յուրի Վինոգրադովը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը։ Նա նշում է, որ μητρί ոչ թե μετρί ձևով փորագրվածը պայմանավորված է արձանագրությունում ձայնավորների քանակական կորստով։ Դա պարզորոշ երևում է նաև առաջին տողում, որտեղ αι-ին արտահայտված է ε-ով։ Γῆ μητρὶ մեջ պետք է տեսնել ոչ թե հողի աստվածուհուն, այլ Դեմետր դիցուհուն, որը իսկապես ծագել է Δη=Γῆ μήτηρ։ Վերջինս Արկադիայում և Լինոսուրում, ինչպես վկայում են մ. թ. ա. III դարի արձանագրությունները, կոչվում էր Տիրուհի, δέσποινα նույնիսկ առանց Δημήτηρ անվան[1]։ Իսկ այս աստվածուհու անունը՝ δέσποινα Δαματηρ ձևով, հանդիպել է լակեդեմոնյան գաղութ Կնիդոսում գտնված արձանագրության մեջ[2]։ Այդ աստվածուհու պաշտամունքի մասին գրել է Նիլսոնը, համարելով նրան առանձին, բայց և Դեմետրի հետ սերտորեն կապված աստվածություն[3]։ Յու. Վինոգրադովը տեղեկացրել է մեզ, որ Կիլիկիայում հայտնի է Օլյուպրիս աստվածուհու անունը, որը կարող էր ազատ կերպով մեր արձանագրության մեջ հանդես գալ Ὀλυπρις ձևով[4]։

Հունարեն և լատիներեն արձանագրությունները, որոնք թողել են հռոմեական նվաճող զորքերը մ. թ. II դարում, ընդգրկում են համեմատաբար կարճ ժամանակահատված՝ մոտավորապես II դարի երկրորդ կեսը։ Ակնեբևաբար նույն ժամանակաշրջանին պետք է վերագրել նաև Արենիում հայտնաբերվածը։ Դրա օգտին են խոսում երկու հանգամանք։ Առաջինը ձայնավորների քանակական կորուստն է, երևույթ, որ բնորոշ է մ. թ. II—III դդ.։ Այն հանդիպում է նաև ավելի ուշ գրված Գառնիի խճանկարի արձանագրության մեջ[5]։ Երկրորդ հանգամանքն է cognomen Վալեսը Արենիի արձանագրությունից։ Տվյալ cognomen-ը համընկնում է 15-րդ լեգեոնի տրիբուն Էլիոս Վալես տոհմանվան հետ, որը հանդիպում է Էջմիածնում գտնված տապանագրում[6]։ Դառնալով դրա ծագմանը, Մ. Ի. Ռոստովցևը նշել է, որ դա-

[1] D e t t e n b e r g. Sylloge inscriptionum Graecarum. Vol. III, Lipsiae, 1920, № 999; F. S o k o l o v s k i. Lois sacrees des cités greques. Paris, 1969, №. 68.

[2] D e t t e n b e r g. Sylloge··· Vol. III. № 1179.

[3] M. P. N i l s s o n. Geschichte der griechischen Religion. I, München, 1955, S. 479—480.

[4] Z g u s t a. Kleinasien Personennamen, § 1087.

[5] Б. Н. А р а к е л я н. Гарни II. Ереван, 1957, с. 37.

[6] Արձանագրությունը հրապարակված է՝ М. И. Р о с т о в ц е в. Новая греческая надпись из Эчмиадзина.—Христианский Восток. Т. III, вып. 3. Спб., 1915, с. 243—248. С. А. Ж е б е л е в. Греческая надгробная надпись из Вагаршапата. Տե՛ս Աշխարբեկ Քալանթարի «Հին Վաղարշապատի պեղումները» (Երևան, 1935) գրքում; К. В. Т р е в е р. Очерки по истории культуры древней Армении. М.—Л., 1953, с. 260.

տելով արձանագրության հունարեն լեզվից, տրիբունը պրովինցիայից էր և սինվորական ծառայությունը սկսել էր Ադրիանոս կայսեր օրոք, 117—138 թթ. և դրանով իսկ ձեռք էր բերել հռոմեական քաղաքացիություն և իրավունք՝ կրելու կայսր Էլիոս տոհմանունը[7]։

15-րդ լեգեոնի տրիբուն Էլիոս Վալեսի և Արենիի արձանագրությունից հայտնի Էմիլիոս Վալեսի տոհմանունների ընդհանրությունը թույլ է տալիս ենթադրել, որ Էմիլիոս Վալեսը նույնպես ծառայել է XV Apollinaris լեգեոնում. հայտնի է, որ հռոմեացիները իրենց լեգեոնները հաճախ կազմավորում էին միևնույն նահանգի բնակիչներից։

Հունարեն արձանագրությամբ զոհասեղանի հայտնաբերումը Արենիում հնարավորություն է տալիս նոր ու կարևոր հետաքրքիր տվյալներ քաղել II դարի կեսերի Հայաստանի պատմության մասին։ Apollinaris լեգեոնը, որտեղ ծառայում էին Էլիոս Վալեսը և Էմիլիոս Վալեսը, Հայաստան է մտնում 163 թ. ե, դատելով Էջմիածնի լատիներեն մի տապանագրից. մինչև 193 թ. մնում է այնտեղ[8]։ Եթե Էմիլիոս Վալեսը, ինչպես նաև Էլիոս Վալեսը, իր ծառայությունը սկսել էր 117—138 թթ., ուստի հազիվ թե կարողանար ծառայությունը շարունակել 170 թ. հետո։ Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ արձանագրությունները, որոնք կապված են 15-րդ լեգեոնի՝ 170—190 թթ. Հայաստանում գտնվելու հետ, փորագրված են լատիներեն[9]։ Ըստ երևույթին 170-ական թթ. սկզբներին 15-րդ լեգեոնը, վետերաններին փոխարինելու համար թարմ համալրում է ստանում այնպիսի մարգերից, որտեղ խոսակցական լեզուն լատիներենն էր։ Այս ամենը գալիս է հաստատելու, որ Էմիլիոս Վալեսը Հայաստան է մտել 15-րդ լեգեոնի հետ, 163 թ.։

163—165 թթ. իրադարձությունները Հայաստանում հայտնի են հռոմեացի պատմիչների կցկտուր տեղեկություններից։ «Իրադարձությունները Հայաստանում հաջողությամբ էր ծավալում Ստատիոս Պրիսկոսը, Արտաշատը գրավվեց»[10]։

«Արդ (Մարտիոսը) գալով նոր քաղաք, որն իր ձեռքում պահում էր Պրիսկոսի դրած հռոմեական կայազորը, ապստամբության փորձ անողներին թե խոսքով և թե գործով հնազանդեցնելուց հետո հայտարարեց, որ (այդ քաղաքը) կլինի դլխավորը Հայաստանում»[11]։

Արտաշատի իրադարձությունների հետ են կապել Դիոն Կասսիոսի հայտարարությունը Տրդատ սատրապի մասին։ «...նույնպես և Տիրիդատես սատրապին, որը Հայաստանում խռովություն էր բարձրացրել և սպանել էր հենիոխների թագավորին և իր սուրը թափահարել էր Վերոսի վրա, երբ վերջինս հանդիմանել էր նրան այդ բաների համար (Մարկոս Ավրելիոսը), չսպանեց, այլ ուղարկեց Բրիտանիա»[12]։

Ն. Դիբվոյսը, ուսումնասիրելով Դիոն Կասսիոսի հիշատակած ապստամբությունը Հայաստանում, գտնում է, որ սատրապ Տրդատը, որը ղեկավարում էր ապստամբությունը երկրում, պարթև էր[13]։ Հետագայում ճշտվեց, որ սատրապ Տրդատը հայ էր, սակայն ուժի մեջ մնաց այն ենթադրությունը,

---

7 М. И. Ростовцев. Указ. соч., с. 245, 246.

8 К. В. Тревер. Указ. соч., с. 260.

9 Նույն տեղում, էջ 261—269։

10 Юний Капитолин. Жизнеописание Марка Аврелия, § 9 (տե՛ս К. В. Тревер. Указ. соч., с. 228).

11 Դիոն Կասսիոս. Հռոմեական պատմություն, հատվածներ, թարգմանություն Ս. Մ. Կիրակոսյանի. Երևան, 1976, LXXI, 3, 2, 1։

12 Նույն տեղում, LXXI, 14, 2։

13 N. C. Debevoise. Political History of Parthia. Chicago, 1938, p. 254.

թե հենց Տրդատն էր ղեկավարել ապստամբությունը Արտաշատում և ամբողջ Մեծ Հայքում[14]։

Ելնելով հենիոխների[15] դեմ Տրդատի գոտեմարտի մասին վկայություններից, առաջ է քաշվում այն ենթադրությունը, թե ապստամբությունը այնքան էր ծավալվել, որ այն ճնշելու[16] համար հռոմեացիները ստիպված էին օգնության կանչել իրենց դաշնակից հենիոխներին։ Ենթադրվում է նաև, որ Տրդատի տիրույթները Սպեր գավառում սահմանակից էին հենիոխների թագավորությանը, իսկ Տրդատն ինքը սերում էր հայոց Բագրատունիներից[17]։

Սակայն եղած բոլոր տվյալների ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգելու այլ հետևության։ Չնայած հռոմեական աղբյուրների սուղ վկայություններին, այնուամենայնիվ, ինչպես նշում են ուսումնասիրողները, պարզորոշ ուրվագծվում է, որ հռոմեացիներին ցույց տրված դիմադրության կենտրոնը երկրի մայրաքաղաքն էր[18]։ Միաժամանակ Դիոն Կասսիոսի խոսքերը, թե Մարտիոս Վերոսը գալով Կայնեպոլիս. խոսքով և թե՛ գործով հնազանդեցրեց խռովության հակում ունեցողներին...[19], ստիպում են ենթադրել, որ ապստամբությունը երկար չի տևել։ Ուսումնասիրողները անհրաժեշտ ուշադրություն չեն դարձրել այն փաստին. որ սատրապ Տրդատի մասին Դիոն Կասսիոսը հիշատակում է իր աշխատության հաջորդ հատվածում[20], դրանով իսկ ժամանակագրորեն առանձնացնելով նրա հետ կապված իրադարձությունները 163 թ. Արտաշատի իրադարձությունների ընթացքից։

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Տրդատի «սատրապ» տիտղոսը, որը հազվադեպ էր օգտագործվում հռոմեական ժամանակաշրջանում։ «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակության առաջին հատորում Տրդատի «սատրապ» տիտղոսի կողքին, որպես հայերեն համարժեք, բերվել է «նախարար»[21] տիտղոսը։ «Սատրապ» և «նախարար» տիտղոսները համադրել է դեռևս Ն. Ադոնցը[22], սակայն նա միաժամանակ նշել է, որ Մեծ Հայքի նախարարների ստատուսը նույնացվում կամ մոտեցվում է սատրապների ստատուսին Հայաստանում Արշակունիների անկումից հետո միայն, V դարում[23]։ Պետք է նկատի ունենալ նաև այն, որ հռոմեացի հեղինակները, խոսելով Մեծ Հայքի վերնախավի մասին, սատրապ տերմինը չէին օգտագործում։ Հատուկ ուշադրության են արժանի Պրոկոպիոս Կեսարացու տեղեկությունները ժառանգական սատրապների մասին Փոքր Հայքում. «Ինչ վերաբերում է մյուս Հայքին, որը գտնվում է Եփրատ գետից այս կողմ և տարածվում է մինչև Ամիդ քաղաքը, այնտեղ իշխում էին հինգ հայ սատրապներ, որոնց իշխանությունը ժառանգական էր և ցմահ։ Նրանք հռոմեացիների կայսրից ստանում էին միմիայն իշխանական նշաններ»[24]։

Ավելի քան հավանական է, որ Պրոկոպիոսի նշած ստատուսը հայ սատրապներն ունեին նախքան 363 թ. կայսր Վալենտի կողմից սատրապություն-

---

[14] R. E. Kiessling. Hvloxol. S. 270; S. Sandalgian. Histoire documentaire de l'Armenie. V. II, Rome, 1917, p. 554: К. В. Тревер. Указ. соч., с. 229; *Հայ ժողովրդի պատմություն. հ. 1, Երևան, 1971, էջ 783—785։*

[15] Dio Cass., LXXI, 14, 2.

[16] К. В. Тревер. Указ. соч., с. 229; *Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 783—785։*

[17] *Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 785։*

[18] К. В. Тревер. Указ. соч., с. 228—233; *Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 784—785*; Б. Н. Аракелян. Арташат I. Ереван, 1982, с. 14.

[19] Dio Cass., 3. 1. LXXI, 3. 1.

[20] *Դիոն Կասսիոս*, LXXI, *14, 2։*

[21] *Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 784։*

[22] Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. Ереван, 1971, с. 110.

[23] *Նույն տեղում։*

[24] *Պրոկոպիոս Կեսարացի. Կառուցումների մասին, III, 1, թարգմանություն Հ. Բարթիկյանի. Երևան, 1967։*

ների թանակը վերանայելը, և որ դա բնորոշ է ոչ այնքան Բյուզանդական, որքան Հռոմեական կայսրությանը։ II դարի սկզբին, երբ հռոմեացիները ստեղծեցին Կապադովկիա պրովինցիան, որի մեջ մտնում էին Հայաստանի մերձնփրատյան մարզերը, պահպանվում էին կառավարման տեղական, հին ձևերը[25]։ Վերն ասվածը պարզորոշ վկայում է, որ Հռոմեական կայսրության ժամանակաշրջանում Փոքր Հայքում ժառանգաբար իշխողները մեծ չափով պահպանում էին իրենց անկախությունը և կրում էին «սատրապ» տիտղոսը։ Այս տվյալները համընկնում են Դիոն Կասսիոսի վկայությունների հետ։ Ինչպես այժմ պարզվում է, Փոքր Հայքի տիրակալներից մեկը՝ սատրապ Տրդատը, ապստամբել է ընդդեմ հռոմեացիների։ Երբ նրա դեմ պայքարի են ելել Փոքր Հայքի հարևանությամբ ապրող հենիոխները, Տրդատը մարտնչել է նրանց դեմ և գոտեմարտում սպանել հենիոխների թագավորին։ Ունենալով ժառանգաբար տիրակալելու իրավունք, Տրդատն իրեն համարում էր հռոմեական կայսրին հավասար։ Եվ երբ Վերոսը կշտամբում է նրան հենիոխների թագավորին սպանելու համար, Տրդատը ձեռք է բարձրացնում Վերոսի վրա, որի համար արտաքսվում է Բրիտանիա։ Ինչպես Կ. Վ. Տրևերն էր գտնում, տվյալ ենթատեքստում Դիոն Կասսիոսի հիշատակած Վերոսը Ագրիանոս կայսեր գահակից Լյուցիոս Վերոսն էր[26]։ Դիոն Կասսիոսի տեղեկությունը պարզորոշ վկայում է, որ հռոմեացիները ստիպված էին հաշվի նստել կիսանկախ մարզի սատրապի արժանապատվության ու տաքարյունության հետ, զգուշանալով սատրապության խռովությունից։ Վերոհիշյալը թույլ է տալիս ժխտել այն ենթադրությունը, որ սատրապ Տրդատը Մեծ Հայքի մեծատոհմիկ աստիճանավոր էր և գլխավորում էր 163 թ. ապստամբությունը երկրում և մայրաքաղաքում։

Դառնանք Արենիի արձանագրությանը։ Արձանագրությունը գտնվել է, ինչպես արդեն նշել ենք, գյուղի ծայրամասում։ Հնում այն եղել է Սյունյաց նահանգի Արփանյալ բնակավայրը, տեղադրված է լեռնային երեք կիրճերի միացման վայրում։ Այստեղով, ծովի մակերևույթից 1300 մ բարձրության վրա, հնուց ի վեր անցնում էին Արարատյան դաշտավայրից, Նախճավանից և Մեծ Հայքի Գողթն (ներկայումս՝ Նախիջևանի ԻՍՍՀ) գավառներից դեպի Սևանա լճի ավազան և արևելք՝ Սյունիք տանող ճանապարհները։ Այդ ուղին կարևոր էր նրանով, որ պատմական Մեծ Հայքի հյուսիսային և հյուսիս-արևելյան մասերը միացնում էր Արտաշատ մայրաքաղաքի հետ։

Հարկ է ընդգծել, որ 15-րդ լեգեոնի հետ կապված մնացած բոլոր վիմագիր հուշարձանները հայտնաբերվել են միայն Էջմիածնի շրջանում։ Ե՛վ տեղանքը, և՛ ամրությունների հետքերի լրիվ բացակայությունը թույլ չեն տալիս հնարավոր համարել, որ լեգեոնը երկար ժամանակ մնացել է Արփանյալում։ Հավանականն այն է, որ զոհասեղանը կանգնեցվել է դեպի այս շրջանները հռոմեացիների կարճատև արշավանքի ժամանակ, իսկ դա կարող էր տեղի ունենալ գրավոր աղբյուրներում հիշատակված 163 թ. իրադարձությունների հետ կապված։ Գ. Խալաթյանցը, անդրադառնալով հիշյալ աղբյուրներին, ուշադրություն է դարձրել Ասինիոս Կվադրատի «Պարթկա» գրքի մի դրվագի վրա, որ պահպանվել է Ստեփանոս Բյուզանդացու աշխատության մեջ։ «Հայաստանի Բակուր թագավորը այդ ժամանակ գտնվում էր Հայաստանում Արտաշատի և Ուտիքի մոտ»։ Դ. Խալաթյանցի կարծիքով, այդ հատվածը վկայում է, որ 163 թ. հռոմեացիների հարձակման ժամանակ Հայաստանի Բակուր թագավորը հեռացել է երկրի արևելյան մարզերը և այնտեղից իր կողմնակիցների միջոցով հայերին հրահրել հռոմեացիների դեմ[27]։ Սակայն Կ. Վ. Տրևերը այս կարծիքը համարում է չհիմնավորված և հակասող այն փաստերին, որ նա ստացել է Հռոմում Բակուր թագավորի ար-

[25] А. Ранович. Восточные провинции Римской империи. М.—Л., 1949, с. 121—122.

[26] К. В. Тревер. Указ. соч., с. 230.

[27] Г. А. Халатьянц. Очерк истории Армении. М., 1910, с. 311.

ձանագրության մեկնաբանությունից։ Ըստ Տրևերի, Բակուր թագավորը չի մասնակցել ապստամբությանը, որովհետև գերի էր Հռոմում[28]։

Բակուր թագավորը (հավանաբար Արշակունի) հայոց գահ է բարձրացել 161 թ., այն ժամանակ, երբ պարթևները հաղթել էին հռոմեացիներին։ Բակուրը փոխարինեց Սոյեմ թագավորին, որը հակված էր դեպի հռոմեացիները։ Հեռանալով Հայաստանից, Սոյեմը երեք տարի կոնսուլ էր Հռոմում[29]։ 163 թ. հռոմեացիները կարողացան բեկում մտցնել ռազմական իրադարձությունների ընթացքի մեջ։ Հայաստանի վրա բարեհաջող հարձակումից հետո հռոմեական զորքերը, Ստատիոս Պրոսկոսի հրամանատարությամբ դուրս գալով Կապադովկիայից, գրավեցին Հայաստանի մայրաքաղաք Արտաշատը։ Ինչպես վերը հիշատակվեց, ենթադրվում էր, որ Արտաշատի գրավումով Հայաստանը զրկվեց անկախությունից, որը խռովություն առաջ բերեց երկրում սատրապ Տրդատի գլխավորությամբ[30]։ Սակայն այնպիսի կարևոր իրադարձություն, ինչպիսին Հայաստանը անկախությունից զրկելն էր, անպայման պիտի արտացոլվեր հռոմեական փաստաթղթերում և ժամանակի գրավոր աղբյուրներում։ Նման վկայագրերի բացակայությունը ստիպում է վերապահությամբ վերաբերվել այդ ենթադրությանը։ Բացի այդ, ինչպես վերը ցույց տրվեց, Փոքր Հայքի մարզերից մեկի տիրակալ սատրապ Տրդատի մասին տեղեկությունները կապ չունեին Արտաշատի իրադարձությունների հետ։ Այս ամենը թույլ է տալիս Գ. Խալաթյանցի ենթադրությունը ուշադրության արժանի համարել և որոնել 163 թ. երկրում տեղի ունեցած իրադարձությունների ընթացքի այլ մեկնաբանություն։

Շուտով, Արտաշատը գրավելուց հետո, Ստատիոս Պրիսկոսը մահացել է լամ, ինչպես ենթադրում են, սպանվել է[31]։ Հայաստանում, ինչպես պարզորոշ երևում է Դիոն Կասսիոսի վկայություններից, տեղի են ունենում հակահռոմեական ընդվզումներ, որոնք ճնշելու համար գալիս է Մարտիոս Վերոսը։ Սակայն Դիոն Կասսիոսի վկայությունն այն մասին, թե Մարտիոս Վերոսը եկել է Կայսեպոլիս, հիմքեր չի տալիս ենթադրելու, թե հակահռոմեական ելույթները խոշոր ապստամբության բնույթ են կրել։ Սատրապ Տրդատի գլխավորած ապստամբության մասին տեղեկությունները նույնպես, ինչպես վերևում ցույց տրվեց, կապ չունեն Մեծ Հայքի իրադարձությունների հետ։ Այն հանգամանքը, որ Բակուրի արձանագրությունը Հռոմում թվագրված է 164 թ.[32], չի հակասում Գ. Խալաթյանցի ենթադրությանը։ Բակուրը, որ նախապես գտնվում էր երկրի մայրաքաղաքում, Ստատիոս Պրիսկոսի մոտենալուն զուգընթաց կարող էր նահանջել դեպի արևելյան մարզերը, դեպի Ուտիք, ինչպես այդ մասին հիշատակում է Ասինիոս Կվադրատը, որպեսզի նոր ուժեր ներգրավեր երկիրը ազատագրելու համար։ Հարկ է նկատել, որ նահանջելով Մեծ Հայքի արևելյան մարզերը, Բակուրը կարող էր աջակցություն ակնկալել այդ գավառներից, որոնք մշակութային և տնտեսական սերտ կապերի մեջ էին Պարթևստանի, Ատրպատականի և Աղվանքի հետ։ Նրան օգնել կարող էին նաև այդ մարզերի քաղաքները՝ Նախճավանը, Տիգրանակերտը Գողթան գավառում, Տիգրանակերտը Ուտիքում, Պարտավը և այլն, քանի որ դրանք, առևտրական կապերի մեջ լինելով դրացի արևելյան պետությունների հետ, խիստ տուժել էին Հայաստանի վրա սահմանված հռոմեական հսկողությունից[33]։ Այս երևույթը կարելի է հետազոտել՝ ուսում-

---

28 К. В. Тревер. Указ. соч., с. 232, 240.

29 Նույն տեղում, էջ 235։

30 Նույն տեղում, էջ 228—232։ Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 783—785; Б. Н. Аракелян. Арташат I. с. 14.

31 Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 784։

32 К. В. Тревер. Указ. соч., с. 240.

33 Հավոգիշ չէ և անհիմն է թվում որոշ պատմաբանների կողմից վերջին տարիներս առաջ քաշվող, անտիկ Հայաստանի, Աղվանքի և Ատրպատականի միջև սահմանների վերա-

նասիրելով հնագիտական նյութը, հատկապես կավակերտ տափաշշերը, որոնք հին աշխարհի առևտրափոխադրական տարաների մեծ տարածում ունեցող ձևերից մեկն էին[34]։

Հայաստանում և հարևան երկրներում հայտնաբերված տափաշշերի ուսումնասիրությունը ցույց է տալիս Հայաստանի սերտ կապերը Աքեմենյան կայսրության հետ հարավում և Վիրքի հետ՝ հյուսիսում։

Հայաստանում տափաշշերի անհետացման ժամանակը (մ. թ. ա. I դարի վերջ—մ. թ. II դար) համընկնում է երկրում հռոմեական ազդեցության ներթափանցման և ուժեղացման ժամանակաշրջանի հետ։ Հատկանշական է, որ մ. թ. ա. II դարի վերջերից Հայաստանի տարածքում նկատվում է ամֆորաների ներմուծում արևմտյան կենտրոններից, որը ավելանում է մ. թ. ա. I դարի կեսերից[35]։ Մ. թ. ա. I դարի վերջերից շեշտակի աճում է հռոմեական դրամների հոսքը Հայաստան։ Մ. թ. I դարից Հայաստանում դադարում է սեփական դրամ հատելը, գերակշռող են դառնում հռոմեական դրամները[36]։ Բոլոր այս գործոնները ակներևաբար վկայում են այն մասին, որ Հայասաանը տնտեսապես և քաղաքականապես ներգրավվել էր հռոմեական նվաճողական քաղաքականության ոլորտը։ Այս քաղաքականության հետևանքով կրճատվեց Պարթևստանի շրջաններից Հայաստանի վրայով հյուսիսի հետ կատարվող տարանցիկ առևտուրը։ Հենց դա էլ պայմանավորեց Պարթևստանին բարեկամ երկրներով՝ Ատրպատականով և Ադվանքով անցնող առևտրական ճանապարհների աշխուժացումը, որտեղ տափաշշերը պահպանվում են մինչև մ. թ. III դարը ներառյալ։ Վերոհիշյալ հանգամանքը մեծ չափով նպաստեց այդ ժամանակաշրջանում քաղաքաշինության զարգացմանը Ադվանքում։

Հասկանալի է, որ Հայաստանում հռոմեական ներխուժման նկատմամբ դժգոհությունը ավելի վառ և ուժգին էր արտահայտված երկրի արևելյան

նայման փորձ, ըստ որի իրը բուսարաքսյան մարզերը մտնում են Ադվանքի, իսկ Նախիջևանի ԻՍՍՀ-ի տարածքը՝ Ատրպատականի կազմի մեջ (տե՛ս К. Алиев. Кавказская Албания. Баку, 1974, с. 121—122; Карта Кавказской Албании к статье З. И. Ямпольского в Советской исторической энциклопедии, т. 1, с. 354; Д. А. Халилов. Племена на территории Азербайджана. Кавказская Албания. Атропатена.—В кн.. Археология СССР. Древнейшие государства Кавказа и Средней Азии. М., 1985)։ Նման ենթադրությունները հակասում են հույն, հռոմեացի և հայ պատմիչների վկայություններին և չեն հաստատվում հնագիտական նյութերով։ Այս հարցը մանրամասն քննված է Ա. Պ. Նովոսելցևի աշխատության մեջ (А. П. Новосельцев. К вопросу о политической границе Армении и Кавказской Албании в античный период.—Кавказ и Византия. Вып. I. Ереван, 1979, с. 10—18)։ Առանց խորանալու հարցի քննության մեջ, նշենք միայն, որ նույնիսկ զարգացած միջնադարում, երբ արդեն փոխվել էին քաղաքական սահմանները, պատմական կայուն ավանդույթ էր Ուտիքը համարել Հայաստանի մի մասը։ Դա լավագույնս պատկերված է Նիզամի Գյանջեիի հանրահայտ պոեմում (տե՛ս Г. Ю. Алиев. Легенда о Хосров и Ширин в литературах народов Востока. М., 1960. с. 3 и сл.). ուր անտիկ Հայաստանի բազարներից մեկը՝ Պարտավը, անվանվում էր Հայաստանի թագուհու ձմեռոց։ Այստեղ պահպանվել է անտիկ և վաղ ֆեոդալական ժամանակաշրջաններին բնորոշ պատմական ավանդույթը, որ արտացոլված է նաև հայ պատմիչների մոտ (Ագաթանգեղոս. Պատմութիւն Հայոց. Երևան, 1983։ Եղիշե. Վասն Վարդանայ և հայոց պատերազմին. Երևան, 1971)։

34 Ф. И. Тер-Мартиросов. Фляги как торговая тара.—В кн.: Проблемы античной истории и культуры. Доклады XIV Международной конференции античников социалистических стран «Эйрене». Ереван, 1979, т. II, с. 409—414.

35 М. О. Зардаряи. Амфоры из раскопок Арташата.—Историко-филологический журнал. 1974, № 1, с. 266—272.

36 Х. А. Мушегян. Денежное обращение в античной и средневековой Армении по нумизматическим данным. V в. до н. э.—XIV в. н. э. Автореферат докторской диссертации. Ереван, 1975, с. 17—19.

մասում։ Հենց այստեղ՝ հողատեր ազնվականության և քաղաքացիների առևտրաարհեստավորական խավի շրջանում Բակուր թագավորը կարող էր հենարան փնտրել հռոմեացիների դեմ մղած պայքարում։ Ըստ երևույթին հենց նրանց նկատի ուներ Դիոն Կասսիոսը որպես «խռովության հակում ունեցողներին»[37]։ Բացի այդ, գտնվելով Հայաստանի արևելյան մասում, Բակուրը կարող էր հուսալ, որ այդտեղ իրեն կօգնեն պարթևների ռազմական ուժերը։ Այս հանգամանքները չէր կարող հաշվի չառնել նաև Մարտիրոս Վերոսը։ 163 թ. Հայաստանի իրադարձությունները քննելիս արդեն ուշադրություն է դարձվել Դիոն Կասսիոսի՝ Մարտիրոս Վերոսին տված բնութագրին.. «...Այս Մարտիրոսն ընդունակություն ուներ ոչ միայն զենքերով զսպել իր հակառակորդներին, կամ արագ գործողությամբ կանխել վտանգը կամ էլ խաբել խորամանկությամբ, մի բան, որ զորավարների ուժն է, այլև համոզիչ խոսքերով հանգստացնել նրանց և բարեկամություն շահել վեհապանծ պարգևներով կամ հրապուրել բարի հույսեր տալով»[38]։

Ստատիոս Պրիսկոսի արշավանքը Կապադովկիայից Հայաստան 163 թ.. կարող էր սկսվել ապրիլ-մայիս ամիսներից ոչ շուտ։ Արշավանքը դեպի Հայաստան և վերջինիս գրավումը պիտի որ տևած լիներ ավելի քան երկու ամիս, որին հետևել է Ստատիոս Պրիսկոսի մահը։ Այդ իսկ պատճառով պետք է ենթադրել, որ Մարտիրոս Վերոսը Հայաստան է եկել աշնանը, հնարավոր է նույնիսկ աշնան վերջին։ Դիոն Կասսիոսի վկայությունը, թե Կայնեպոլիսում պահվում էր Ստատիոս Պրիսկոսի հռոմեական կայազորը[39], թույլ է տալիս ենթադրելու, որ այդպիսի կայազորներ կային նաև Արարատյան դաշտի արևմտյան մասի այլ քաղաքներում։ Այդ իսկ պատճառով էլ ձմռանը Բակուր թագավորը ստիպված էր նահանջել դեպի լեռները։ Հնարավոր է, որ նա հեռացել է դեպի Ուտիք, ուր գտնվում էր հայոց թագավորների ձմեռոցը։ Հնարավոր է նաև, որ Բակուր թագավորի ենթադրվող գարնանային հարձակումը կանխելու և հակահռոմեական ուժերի մասնատվածությունից օգտվելու նպատակով Մարտիրոս Վերոսը նախաձեռնում է իր հակառակորդների համար անսպասելի ձմեռային գրոհ։

Կայնեպոլսից դեպի Արփանյալ (ուր գտնվել է 15-րդ լեգեոնի զինվորներից մեկի՝ Էմիլիոս Վալեսի հունարեն արձանագրությունը) հռոմեացիների երթուղին սկզբում ընթանում էր դեպի արևելք՝ հռոմեացիների կողմից գրավված Արտաշատի միջով, Արաքս գետի ափով ձգվող հին ճանապարհով, որ տանում էր դեպի Նախճավան և Գողթան գավառի Տիգրանակերտ քաղաքները։ Գրավելով Նախճավանը և Գողթան գավառը, հռոմեացիները փակում են Ատրպատականի վրայով Հայաստանին մոտենալու պարթևների ուղիները, ինչպես նաև Բակուր թագավորի՝ պարթևական մարզեր նահանջի ուղիները։ Այստեղից, մինչև XX դարը, Սյունիքի վրայով դեպի հյուսիս էին տանում Արարատյան դաշտավայրը հյուսիս-արևելյան գավառների հետ կապող ամենակարճ ճանապարհները։ Բացի այդ, անտիկ շրջանում այստեղ էին տեղադրված պատմական Մեծ Հայքի երեք խոշոր քաղաքները՝ Նախճավանը, Գողթնի Տիգրանակերտը, Արքսատը։

Նախճավանի և Գողթնի Տիգրանակերտի տեղադրությունը հայտնի է[40], Արքսատի տեղադրությունը մինչև հիմա չի ճշտվել[41]։ Ընդունված հայերեն

---

[37] Dio Cass., LXXI, 3, 1.

[38] Դիոն Կասսիոս, LXXI, 3, 1։

[39] Նույն տեղում։

[40] С. Т. Еремян. Исторические карты.—В кн.: Атлас Армянской ССР. Ереван—Москва, 1961, с. 103.

[41] Ըստ Մարկվարտի, Ստրաբոնի մոտ հիշատակված Արմենիա քաղաքը Ἄθαρα կամ Ἀρξατα (Strabo. XI, 14, 3 et 6) հավանաբար պետք է նույնացնել Արաքսի հարավային վտակի վրա գտնվող հին հայկական Արտաշի հետ (Y. Markwart. Eraschahr. Berlin, 1901, S. 4—5)։ Մարկվարտի այս կարծիքը բերում է Հ. Մանանդյանը. տե՛ս О торгов-

aršat[42] տառադարձումը, որ ենթադրում է հունարեն ks-ի փոխարկումը հայերեն Ś-ի, պարզություն չի մտցնում, որովհետև չնայած šat երկրորդ բաղադրիչը բնորոշ է հայկական քաղաքների անվանմանը, ar առաջին բաղադրիչի իմաստը այնուամենայնիվ անորոշ է մնում[43]։ Սակայն հունարենը կարող էր վերարտադրել հայերեն arka+šat-ը š-ն s-ի փոխարկելով, ուր arka-ն նշանակում է թագավոր[44], իսկ բուն անվանումը՝ թագավորական քաղաք։ Հետաքրքիր է, որ Արփան Արաքսին միախառնվելու տեղի և Նախճավան քաղաքի միջև գտնվում է Շահթախտի քաղաքատեղին։ Ա. Կ. Ալեքպերովն այն կարծիքն է հայտնել, թե Շահթախտի անվանումը՝ թագավորական գահ, պատմական ինչ-որ հիմք[45] պետք է ունենա։ Այդտեղ գտնված հնագիտական նյութերից դատելով (խեցեղեն և ապակի, պահվում են Բաքվի[46] հնագիտական թանգարանում) այդ քաղաքատեղիում, նրա հին հանրահայտ շերտերից բացի, կան նաև հելլենիստական և ուշ հռոմեական ժամանակաշրջանների մշակութային շերտեր։ Դա թույլ է տալիս ենթադրելու, որ անտիկ շրջանում այստեղ քաղաք է եղել։ Հնարավոր է, որ Շահթախտի-թագավորական գահ ժամանակակից անվանումը ավելի ուշ պատճենումն է Արքաշաա—թագավորական քաղաք հնագույն անվան։

Արքսատ քաղաքի տեղադրման մյուս հնարավոր վայրը Օղլանկալա ամրոցն է իր ստորոտում տարածվող քաղաքատեղիով։ Ամրոցը գտնվում է Արաքս և Արփա գետերի միախառնման տեղում և հսկողության տակ է պահել դրանց հոսանքի երկայնությամբ ձգվող ճանապարհները, մեկը՝ Արաքսով դեպի արևելք, Նախճավան, մյուսը՝ Արփայի վերին հոսանքով հյուսիս, դեպի Արփանյալ։ Այստեղ հայտնաբերված հնագիտական նյութը իրավունք է տալիս Օղլանկալան թվագրել անտիկ ժամանակով[47]։ Կիսաշրջանաձև աշտարակները և պատերի մի քանի շարքերով ամրաշինական կառույցները, որոնք Ա. Կ. Ալեքպերովը համադրել է ասորեստանյան բարձրաքանդակների[48] վրա պատկերված ամրոցների հետ, իրենց ուղղակի զուգահեռներն ունեն հին Արտաշատի[49] պաշտպանական կառույցներում, որը թույլ է տալիս ենթադրելու, որ Օղլանկալան կառուցվել է նույն ժամանակ, ինչ Արտաշատը։ Ամենայն հավանականությամբ այն եղել է Արքսատ քաղաքի միջնաբերդը, որ կառուցել է Արտաշես թագավորը։ Սրանով էլ պայմանավորված է այն հանգամանքը, որ Ստրաբոնը Արտաշատը և Արքսատը հիշատակում է միատեղ[50]։

ле и городах Армении в связи с мировой торговлей древних времен. Ереван, 1954, с. 53. *Սակայն այս հիպոթեզը չի ապացուցվում, քանի որ այն ենթադրում է սխալների մի շարք, շրջանցելով դրանցից և ոչ մեկի պատճառը։*

42 *Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 542։*

43 *Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. 3, Երևան, 1977։*

44 *Նույն տեղում, հ. 1, Երևան, 1971։*

45 Л. К. Алекперов. Крашеная керамика Нахичеванского края и Ванского царства.—В кн.: А. К. Алекперов. Исследования по археологии и этнографии Азербайджана. Баку, 1980.

46 *Վևի Ալիևի պեղումների նյութերը։*

47 Дж. Халилов. Указ. соч., с. 105.

48 А. К. Алекперов. Указ. соч.

49 *Ռ. Ն. Առաքելյանի պեղումները, 1984 թ.։* Ж. Д. Хачатрян, А. В. Тоннкян. Некоторые вопросы градостроительства античного Арташата. IV-ый Международный симпозиум по армянскому искусству. Ереван, 1985, Тез. докл.

50 Strabo, XI, *14, 6. Կասկածից վեր է, որ Արքսատի տեղադրման վերջնական ճշգրտումը կկատարվի հնագիտական պեղումներից հետո միայն։ Միաժամանակ պետք է հաշվի առնել, որ ինչպես ցույց է տալիս Հայաստանի անտիկ քաղաքների հնագիտական ուսումնասիրությունը, Հին պատմիչների տեղեկությունները այս կամ այն քաղաքի կառուցման վերաբերյալ որևէ թագավորի կողմից, չեն բացառում այդ հուշարձանի ավելի վաղ լինելու իրողությունը։ Գրեթե հայտնի չեն նախիշևանի ԻՍՍՀ-ի տարածքում գտնվող անտիկ ժամա-*

Շահթախտիով և Օղլանկալայով էր անցնում Խոյից դեպի Արևելյան Կովկաս ձգվող Իրանի առևտրական հին ճանապարհը[51]։ Քաղաքների տեղագրությունը Արարատյան դաշտավայրի արևելյան մասում ընդգծում է, որ դրանք առևտրական կայաններ են եղել Ատրպատականից և Պարթևստանից դեպի Հայաստան ձգվող առևտրական ճանապարհներին։ Այդ իսկ պատճառով հնարավոր է թվում, որ ինչպես այդ, այնպես էլ Արարատյան դաշտավայրի մյուս քաղաքներում և մայրաքաղաք Արտաշատում բռնկել են հակահռոմեական հուզումներ։ Անկասկած, հռոմեացիները գրավել են այդ քաղաքները, որովհետև դժվար թե նրանք շարժվեին դեպի հյուսիս՝ Սյունիք, առանց ապահովելու իրենց թիկունքը։ Բացի այդ, գրավելով Արարատյան դաշտավայրի արևելյան մասի քաղաքները, հռոմեացիները ջլատում էին հայերին, Բակուրի կողմնակիցներին կտրելով իրենց մայրաքաղաքից։

Արաքսի հոսանքով դեպի հյուսիս՝ Սյունիք են տանում երկու ճանապարհ. մեկը, որ առավել հարմար է, Նախճավան քաղաքից անցնում է Շաղատ տանող լեռնանցքով, մյուսը ավելի կարճ է, սակայն անցնում է Արփա գետի նեղ կիրճով՝ Օղլանկալա ամրոցից դեպի հին Արփանյալ։ Հասկանալի է, որ հռոմեացիներին անհրաժեշտ էր երկու ճանապարհն էլ առնել հսկողության տակ։ Հավանական է, որ Մարտիրոս Վերոսը հռոմեական զորքերի հիմնական մասի հետ դեպի հյուսիս է շարժվել Շաղատ տանող լեռնանցքով, իսկ մնացած զորքը նեղ կիրճով բարձրացել է դեպի Արփանյալ, իր վրա կենտրոնացնելով Բակուրի կողմնակիցների ուժերը։ Արփանյալի՝ ռազմաստրատեգիական հանգուցային այդ կայանի գրավումով Սյունիքը կտրվել է Սևանա լճի ավազանից, անհնար է դարձել փրկարար օգնությունը հյուսիսից և ապստամբ հայերի թիկունքում հռոմեական զորքերի հայտնվելու վտանգ է ստեղծվել։ Արփանյալում հունարեն արձանագրության առկայության փաստը ցույց է տալիս, որ հռոմեացիներին հաջողվել է իրականացնել իրենց ծրագիրը։ Հայտնի չէ, թե նրանք որքան են խորացել Սյունիքում և ավելի հյուսիս։ Պետք է ենթադրել, որ հռոմեացիների ձմեռային վճռական հարձակումը դեպի Մեծ Հայքի արևելյան մասի սիրտը, քաղաքների և լեռնանցքների գրավումը կոտրել է հակահռոմեական ուժերի դիմադրությունը, պառակտել նրանց շարքերը և Բակուր թագավորին ստիպել դադարեցնել հռոմեացիներին ցույց տրվող դիմադրությունը։ Հռոմեացիների արագ առաջխաղացումը Հայաստանի արևելյան մարզեր և պարթևների ռազմական անհաջողությունները հավանաբար ստիպել են Աղվանքին հրաժարվել Բակուր թագավորին աջակցելուց։ Այս ամենը Բակուր թագավորին կարող էին ստիպել անձնատուր լինել հռոմեացիներին։ Հնարավոր է, որ դրան նպաստել են նաև Մարտիրոս Վերոսի խոստումները կայսերական ներողամտության, ինչպես նաև Բակուրին Հայաստանի թագավոր թողնելու մասին, եթե վերջինս հպատակվեր Հռոմի կայսրին։ Մարտիրոս Վերոսը կարող էր օրինակ բերել Հռոմում Տրդատ I-ի թագադրումը։ Ենթադրել, որ Բակուր թագավորը ռազմական անհաջողություններից հետո ինքնակամ հանձնվել է հռոմեացիներին, թույլ է տալիս այն հանգամանքը, որ Հռոմում հայտնաբերված, Բակուրի անունից իր եղբայր Միհրդատի հիշատակին գրած տապանագրում պահ-

---

նակաշրջանի հուշարձաններից հայտնաբերված նյութերի հրապարակումներ, բացառությամբ մի քանի թաղումների։ Ջ. Խալիլովի նշված աշխատության մեջ բերված աղճատված նյութը (էջ 105—106, աղ. XII), որը բնութագրվում է որպես Ատրպատականի, ցույց է տալիս պատմական Հայաստանի մնացած մասերի հետ տվյալ մարզի մշակութային ընդհանրությունը միայն և, բնականաբար, անթավարար է պատմական իրադարձությունները ճշտելու համար։ Այդ գավառների նյութական մշակույթի ընդհանրությունը պատմական Հայաստանի Արարատյան դաշտավայրի մյուս գավառների հետ ակներև է նաև ըստ այլ հուշարձանների։ Այսպես, Ա. Կ. Ալեքսերովի (նշվ. աշխ., էջ 49) նկարագրած ժայռափոր ջրհորը նույնն է, ինչ հին Արտաշատի 12 բլուրներից մեկի վրա գտնվող ժայռափոր ջրհորը։

51 Я. А. Манандян. Указ. соч., с. 243.

պանվում է Բակուրի տիտղոսը՝ «Մեծ Հայքի թագավոր»։ Միաժամանակ, Բակուր թագավորն ու իր եղբայրը կրում են Ավրելիոս տոհմական անունը, որ բնորոշում է նրանց կախումը կայսր Մարկոս Ավրելիոսից[52]։ Համոզիչ է Կ. Վ. Տրևերի դիտողությունը, թե «Մեծ Հայքի թագավոր» տիտղոսը Բակուրը կարող էր կրել մինչև Սոյեմի երկրորդ գահակալումը, այսինքն՝ Բակուրը որոշ ժամանակ գտնվել է Հռոմում, պահպանելով հայոց թագավորի իր տիտղոսը[53]։ Սակայն չի կարելի համաձայնվել այն ենթադրության հետ, թե Սոյեմը Հայաստան է վերադարձել ապստամբների պահանջով, երկրի անկախության համար մղած պայքարից հետո[54]։ Այս ենթադրության մեջ հաշվի չի առնվել Դիոն Կասսիոսի հաղորդած տեղեկությունը. «Մարտիոս Վերոսն ուղարկել էր Թուկիդիդեսին, որպեսզի նա Սոյեմոսին վերստին բերի Հայաստան»[55], որ նախորդում է Մարտիոս Վերոսի Կայնեպոլիս գալու և երկիրը հնազանդեցնելու մասին տեղեկությանը։ Հայտնի է, որ դեռևս Ադրիանոս կայսեր տիրապետության վերջին շրջանում Հռոմը հրաժարվում է հպատակված թագավորությունները պրովինցիաների վերածելու քաղաքականությունից, գերադասելով նրանց պահել դաշնակցային-կախյալ վիճակում և օգտագործել այդ երկրների ռազմական ուժը Հռոմի թշնամիներին հետ մղելու համար։ Այս քաղաքականությունը ավելի վառ է արտահայտվում Մարկոս Ավրելիոսի տիրապետության շրջանում։ Ուստի անհիմն է այն ենթադրությունը, թե Հռոմը ձգտում էր Հայաստանը զրկել անկախությունից։ Այս հարցի վերաբերյալ հռոմեացի պատմիչների տեղեկությունների քննությունը հիշտ հակառակն է ապացուցում։ Այսպես, օրինակ, այն հանգամանքը, որ Մարտիոս Վերոսը Սոյեմ արքային կանչել է նախքան իր Կայնեպոլիս դալը, ենթադրել է տալիս, որ Հայաստանում ռազմական ընդհարումների ժամանակ Հռոմը սկզբից ևեթ ձգտում էր վերականգնել իր հսկողությունը Հայաստանի վրա՝ պարթևական դրածո Բակուրին հեռացնելու և գահը իր հովանավորյալ Սոյեմին վերադարձնելու միջոցով։ Ներողամտության խոստումները Բակուրին և նրա Հռոմ ժամանելը որպես Հայաստանի թագավոր հռոմեացիներին պետք էր, ըստ երևույթին, Հայաստանում հակահռոմեական տրամադրությունները վերջնականապես ճնշելու և այստեղ իրենց դիրքը ամրապնդելու համար։ Անշուշտ Հայաստանում կային նաև հռոմեական քաղաքականության կողմնակիցներ, որոնք նախկինում աջակցում էին Սոյեմ թագավորին։

Սոյեմի գահակալության առաջին տարիներին երկրում հռոմեական զորքերի բացակայությունը, որին անդրադարձել է Կ. Վ. Տրևերը[56], կասկածի տակ է առնում գիտնականի այն ենթադրությունը, թե 163—164 թթ. ամբողջ երկիրը համակված էր հակահռոմեական տրամադրություններով[57]։ Ըստ երևույթին II դարի կեսերին Հայաստանում հավասարակշռություն էր հաստատվել ներքին ուժերի միջև, որոնց մի մասը հռոմեական կողմնորոշում ուներ, մյուսը՝ պարթևական։ Այս երևույթը կործանարար ազդեցություն ունեցավ երկրի համար երեք դար հետո։ Այդ իսկ պատճառով որևէ խմբավորման գերակշռությունը պայմանավորված էր առաջին հերթին արտաքին քաղաքական հանգամանքներով։ Հաշվի առնելով այդ, 163—164 թթ. Հայաստանը գրավելուց հետո հռոմեացիները իրենց լեգեոնները թողեցին երկրի ներսում։ Բացի այդ, Հայաստանի մայրաքաղաքը Արտաշատից Կայնեպոլիս տեղափոխելը նույնպես նպատակ ուներ երկրի քաղաքական կենտրոնը հեռացնել Հռոմին հակառակորդ, նորերս հնազանդեցված մարզերից։ Այս գործողու-

---

52 К. В. Тревер. Указ. соч., с. 236—242.

53 Նույն տեղում։

54 Նույն տեղում, էջ 229—234։

55 Դիոն Կասսիոս, LXXI, 3, 1։

56 К. В. Тревер. Указ. соч., с. 225.

57 Նույն տեղում, էջ 229։

թյունները ջլատեցին Հռոմից Բակուր թագավորի վերադարձին սպասող պարթևական խմբավորումների գիրքերը և ուժեղացրին Սոյեմ թագավորին հովանավորող, հռոմեական դիրքորոշում ունեցողների ուժերը։ Միայն այժմ հռոմեացիները կարողացան տոնել իրենց հաղթանակը, նշանավորելով այն երկու տեսակի հուշադրամների թողարկմամբ 163—164 թթ., մեկը՝ նվաճված Հայաստանի պատկերով, որ նշանավորում էր Բակուր թագավորի գերեվարումն ու նրան գահակալությունից զրկելը, երկրորդը՝ հայոց թագավորի գլխին պսակ գնող կայսեր պատկերով և rex armeniis datus մակագրությամբ, որ նշանավորում էր Սոյեմ թագավորի վերադարձը հայոց գահ և հռոմեական հսկողության վերականգնումը Հայաստանի նկատմամբ[58]։ Օրինաչափ չէ այն ենթադրությունը, թե երկու տեսակի դրամների համաժամանակյա թողարկումը նպատակ ուներ լոկ հիշեցնել հայերին իրենց հպատակության մասին[59]։ Ավելի բնական ու հավանական է թվում, որ այդ դրամների համաժամանակյա թողարկումը արտացոլում էր գործերի իրական վիճակը; այսինքն՝ խորհրդանշական երկու գործողությունների միաժամանակյա իրագործումը՝ կայսեր և սենատի կողմից Բակուր թագավորին գահից զրկելը և կայսեր ու սենատի կողմից Սոյեմին Հայաստանի թագավոր հռչակելը։ Առաջնորդվելով այն հանգամանքով, որ Մարտիոս Վերոսը Սոյեմին հետ էր կանչել նախքան Հայաստանը հնազանդեցնելը, պետք է ենթադրել, որ հաղթահանդեսի ժամանակ Սոյեմն արդեն գտնվում էր Հայաստանում, իսկ կայսրն ու սենատը ընդամենը հաստատել են գահակալության նրա իրավունքները։

Թեև Բակուրը անձնատուր եղավ հռոմեացիներին և ընդունեց Ավրելիոսի տոհմական անունը, որն ընդգծում էր նրա հպատակությունը, կայսրը Հռոմի համար առավել հուսալի համարեց հայոց գահին վերականգնել հռոմեացիների կողմնակից Սոյեմին։ Բացառված չէ, որ դրան նպաստել են նաև վերջինիս կապերը Հռոմի հետ, որոնք նա ստեղծել էր Հռոմի կոնսուլ եղած ժամանակ։

Այսպիսով, Արենիի հունարեն արձանագրության քննությունը, նրա համադրումը հռոմեացի պատմիչների վկայությունների հետ, թույլ են տալիս վերանայել 163—164 թթ. իրադարձությունների ընթացքը Հայաստանում։

Արտաշատի վրա Ստատիոս Պրիսկոսի հաջող գրոհից հետո երկրում պարթևասեր ուժերը Բակուր թագավորի գլխավորությամբ բավական հաջող դիմադրություն էին ցույց տալիս հռոմեացիներին։ Ընդվզած հայերի հաջողությունը բացատրվում էր ամենից առաջ այն բանով, որ նրանց աջակցում էր երկրի արևելյան մասը, ուր գտնվում էին պարթևամետ հողատեր ազնվականությունը և արևելյան երկրների հետ առևտրական կապեր ունեցող քաղաքները։ Սակայն հայ ազնվականության և քաղաքացիների քաղաքական մասնատվածությունը, Բակուր թագավորին համաժողովրդական աջակցություն չցուցաբերելը, պարթևների կողմից օգնության բացակայությունը հակահռոմեական դիմադրությունը դատապարտեցին անհաջողության։

Քիչ դեր չխաղացին Հայաստանի տարբեր մասերում հակահռոմեական ելույթների անհամաձայնեցվածությունը և ոչ համաժամանակյա բնույթը։ Դատելով ըստ Դիոն Կասսիոսի վկայած իրադարձությունների ընթացքի, Փոքր Հայքում սատրապ Տրդատի ապստամբությունը տեղի է ունեցել հակահռոմեական դիմադրությունը Մեծ Հայքում ճնշելուց հետո։ Հավանաբար, Փոքր Հայքում ապստամբությունը ճնշելուց հետո է, որ հռոմեական սենատը 165 թ. Լյուցիոս Վերոսին «Armeniacus» տիտղոսն է շնորհում։ Օգտվելով մարտնչող հայերի մասնատվածությունից, գործողությունների անհամաձայնեցվածությունից, Պարթևստանից և հարևան մարզերից աջակցության բացակայությունից, հռոմեացիները գրավելով և իրենց հսկողության

---

[58] H. Mattingly. Roman Imperial Coinage. Vol. III, London, 1930, pl. XIII, №. 256. pl. X, № 197; eg. 324, № 1402, 1408.

[59] К. В. Тревер. Указ. соч., с. 236.

տակ պահելով Հայաստանի քաղաքները, կարողացան հայերի համար անակրնկալ ամեռային գրոհ կազմակերպել, գրավել լեռնանցքները և «կայսեր ներողամտության մասին բանավոր խոստումներով ու գործով հնազանդեցնել խռովության հակվածներին»։ Այդպիսի գործերից մեկն էլ, ըստ երևույթին, Արփանյալի գրավումն էր։ Բայց՝ ը. որ Արենիի արձանագրությունը ղոհասեղանի վրա արվել է Արփանյալի վրա հարձակումը բարեհաջող ավարտելու առիթով, 163 թ. վերջին կամ 164 թ. սկզբին։ Բացառված չէ, որ լինելով վետերան, Էմիլիոս Վալեսը ինքն է ղեկավարել լեռնանցքը գրոհող զինվորական ջոկատը և այդ իսկ պատճառով էլ արձանագրությունը գրված է նրա անունից։

ГРЕЧЕСКАЯ НАДПИСЬ ИЗ АРЕНИ
(К политическим событиям в Армении во II в. н. э.)

Ф. И. ТЕР-МАРТИРОСОВ

Резюме

В 1978 г. в высокогорном поселении Аренн, где проходит древняя дорога, соединявшая Араратскую долину с северо-восточными регионами страны, был найден каменный жертвенник с греческой надписью, начертанной от имени воина XV римского легиона: «Эмилий Валес (Валент) Земле Матери (Деметре) Олюприс Богине Владычице». Изучение и сопоставление данных находки и сведений римских авторов о событиях в Армении в середине II в. заставляют пересмотреть бытующее мнение о попытке превращения Армении в это время в римскую провинцию, вызвавшей в стране восстание под предводительством сатрапа Тпрндата. После кратковременного успеха парфян, изгнавших из Армении римского ставленника царя Соэма, Рим в 163 г. вновь перешел в наступление. Захватив столицу Армении Арташат, римляне организовали поход в восточные и северо-восточные области страны. Овладев восточной частью Араратской долины и ее городами, римляне проникли по ущелью р. Арпа к Арпанеалу-Арени, вынудив пропарфянски настроенного царя Армении Пакора сдаться на милость римского императора. Однако целью римлян было не превращение Армении в провинцию, а обеспечение ее проримской ориентации. Для этого они оставили в стране свои войска и вернули на армянский престол царя Соэма. Независимо от событий в Великой Армении, по-видимому несколько позднее, правитель одной из областей Малой Армении сатрап Тиридат попытался освободиться от римской зависимости, но был сослан в Британию. Новонайденная надпись начертана во время похода римлян против царя Пакора, находившегося зимой 163—164 гг. в северных областях страны.